ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

2021 թվականի նոյեմբերի 8-ին Երևանի Տ. Շնչենկոյի անվան թիվ 42 ավագ դպրոցում կայացավ մանկավարժական խորհրդի արտահերթ նիստը, որին մասնակցում էին խորհրդի 26 անդամից 25-ը (հարգելի բացակա 1):

Օրակարգում՝

1. Օրակարգի ներկայացում և հաստատում /զեկուցող Ն. Ալավերդյան/
2. Դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդների զարգացման ծրագրերի քննարկում /զեկուցող՝ Էլ. Թումանյան/
3. Դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդներին տրված ձայների հաշվիչ հանձնաժողովի կազմի ընտրություն
4. Փակ քվեարկությամբ մանկխորհրդի թեկնածուի ընտրություն

1. Լսեցին՝ դպրոցի կառավարման խորհրդի անդամ հանդիսացող Ն. Ալավերդյանը ներկայացրեց օրակարգային հարցերը և բացատրեց, որ դրանք բխում են դպրոցի տնօրենի ընտրության նոր կարգի դրույթներից, այն է՝ ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի հ. 319-Ն և 2021 թվականի օգոստոսի 27-ի հ. 1380-Ն որոշումներից:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի հ. 319-Ն և 2021 թվականի օգոստոսի 27-ի հ. 1380-Ն որոշումները և Ն. Ալավերդյանի զեկույցը՝ մանկխորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել ներկայացված օրակարգը:

2. Լսեցին՝ Ն. Ալավերդյանը ներկայացրեց, որ հոկտեմբերին արված հայտարարության համաձայն՝ արդեն ավարտվել է հավակնորդների գործերի ընդունման ժամկետը, և այսօրվա հանդիպմանը կներկայացվի և կքննարկվի դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի միակ հավակնորդ Էլեոնորա Պավելի Թումանյանի ներկայացրած ծրագիրը:

Արտահայտվեցին՝ Ա. Մկրտչյանը, Ա. Թորոսյանը, Ս. Հայրապետյանը, Մ. Հովհաննիսյանը նշեցին, որ վերջին 10 տարիների՝ Էլ. Թումանյանի հետ իրենց անցած ճանապարհը ցույց է տվել, որ իրենք գործ ունեն փորձառու, բանիմաց և դպրոցասեր տնօրենի հետ, և կասկած չունեն, որ նոր ծրագրի հիմքը ևս պետք է լինեն հավակնորդի վերոնշյալ գծերը, այնպես որ ծրագիրը հանգամանալից ներկայացնելու կարիք իրենք չեն տեսնում:

Լսեցին՝ Այնուամենայնիվ, կարգի համաձայն՝ դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի միակ հավակնորդ Էլ. Թումանյանը ներկայացրեց զարգացման իր ծրագիրը, որում հանգամանորեն անդրադարձավ դպրոցի առավելություններին, ուժեղ և թույլ կողմերին, ներկայացրեց ծրագրում ընդգրկված հիմնական նպատակներն ու դրանց իրականացման ուղիները:

Հիմք ընդունելով Էլ. Թումանյանի զեկույցը՝ մանկավարժական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Ընդունել ի գիտություն:

3. Լսեցին հաշվիչ հանձնաժողովի կազմի ընտրության հարցը: Ն. Ալավերդյանն առաջարկեց հաշվիչ հանձնաժողովում ընդգրկել Ա. Մանուկյանին, իսկ Ա. Մկրտչյանն առաջադրեց Մ. Ղուկասյանի և Ն. Մանուչարյանի թեկնածությունները: Առաջարկները միաձայն ընդունվեցին:

Հաշվի առնելով Ն. Ալավերդյանի և Ա. Մկրտչյանի առաջարկությունները՝ մանկավարժական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Քվեարկության արդյունքները ներկայացնելու համար բաց քվեարկությամբ ձևավորել հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ կազմով՝

1. Ա. Մանուկյան
2. Մ. Ղուկասյան
3. Ն. Մանուչարյան

4. Անցկացվեց փակ քվեարկություն, որին մասնակցեց մանկխորհրդի 25 անդամ:
Լսեցին՝ ընտրության հաշվիչ հանձնաժողովի ներկայացրած արդյունքները.

Կողմ - 23 ձայն

Դեմ - 2 ձայն

Ելնելով փակ թվեարկության արդյունքներից՝ մանկավարժական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Երևանի Տ. Շնչենկոյի անվան թիվ 42 ավագ դպրոցի մանկխորհրդի կողմից ընտրված համարել Էլ. Թումանյանին:

Մանկխորհրդի նախագահ՝ Էլ. Թումանյան

Մանկխորհրդի քարտուղար՝ Ն. Ալավերդյան